

և սերտ յարաբերութիւն ունենալ իւր ծխոց հետ, որպէս զի կարողանայ համնել իւր նպատակին—այն է կատարել իւր պարտականութիւնքը գէպի իւր ծուխն իրբե հոգեռոր հայր և հովիւ, պաշտպան նորա աշխարհային գայթակզութեանց գէմ:

Այսպիսի յարաբերութիւնք քահանայի և ծխոց մէջ բացի բարոյական անհամեմատ գերազանց դիբից, օգտաւէտ է քահանայի համար և նիւթական կողմից, որովհետեւ և ծուխը նըրան պարտաւորուած կիբինի վարձատրել ոչ իրբե մի արհեստաւորի, որ որոշեալ գնով պարտաւորում է նորա մի պէտքը հոգալու, այլ կգնահատէ և կվարձատրէ իրբե իւր ընահնեաց օգտաւէտ և նորա բարօրութեան միայն ծառայող հոգեռոր հօրը: Այսպիսիների համար նա իրան կըրկէ և աւելորդ ծախսերից ու շռայշութեան առարկաներից, որպէս զի շահէ իւր ընտանեաց կարեռագոյն հոգեռոր անդամին և հօր, մինչդեռ նոյնը բնաւ չի անիլ մի արհեստաւորի համար:

Մեր նախնիք շատ լաւ են հասկացել քահանայի և իւր ծխոց մէջ կարեռոր յարաբերութիւնն, ուստի և քահանան ընարուելով ժողովրդից ձեռնադրում է նորա հոգեռոր հայր և հովիւ ցըմահ: Թողի ժողովրդականք և հոգեռոր իշխանութիւնը միմեանց օգնելով առաջ բերեն իրանց պաշտօնին յարմար քահանայացուք, պահպանելով ծխական հովութիւնն և երրէք քահանայք նիւթառպէս անապահով վիճակ չեն ունենալ:

### Ա. ԷջՄիւծնի ԳՐԵԳՈՐՅՆ

№ 1353 ձեռագիրն է Մեկնութիւն քաղուածոց Յովհաննու աւետարանի: ի Տաթեացւոյն, գրիչն է Սրապիոն սարկաւագն, որ արտագրել է Տրապիզոն քաղաքում ազգական ՌՄէ և Փըրկական 1608 թաւականին:

Փառք և գոհութիւն զարմանագործին Աստուծոյ, որ յայսմ ամի արարմէ սրանչելագործ զօրութիւն: Որ ընկեաց զամբարտաւանն, և զիոնարհն ըարձրացոյց, ըստ այսմ թէ հօրաց ալեւլունք թուլացան և տկարք վառեցան զօրութեամբ: Որ և ազգմանէ չարին՝ բնակարանն բանսարկուին՝ մէծ գաղանն և չար վիշտապն, շունն կատաղի և երկրորդ Ըռալսակն, պիղծ Ալի փաշան ձան փոլատին օրդին, որ ժողովեաց բազում զօրս վաթսուն հազար հետեւակ սակման և քան զայս աւելի և ո՛չ պահաս զին: որս ձիաւոր,

որ և տիրեազ բռնութեամբ երկրին Տիրերիայ, որ Հալապ ասի, և բազում քաղաքաց և գիւղօրէից աւեր էած, զոր թէ զրէար մի ըստ միոջէ չէր բաւահան տանել թղթայ, որ և ի սոյն չարէն ապստամբեալն չարն և ժանդն տասնապստիկ քան զա՞ պիղծ թաւուլն և եկեալ տասն հազար հեծելօք ի յերկրին Կիլիկիցւոց և առեալ զ Ատանա, զ Թարսոս, զ Ախու, զ Վարս և բազում աւեր էած և եօթն հարիւր արու մատաղ տղայք գերի տարաւ ի Ատանոյ, և անտի գիմեալ ի վերոյ երկրին Մարաշոյ աւերելով և եկեալ հասաւ ի Սերաստիա, և անտի եկեալ ի Եկեղեց գաւառն և բազում աւեր էած երկցու և երիցու, որ և սովորեալ էր պիղծ արեան արրուն, որ թղյլ ետ Աստուած վասն ծովացեալ մեղաց մերօց, և այլ բազում աւեր էած աշխարհին մինչեւ ի մեծ ծովեզրն Եփեսոս ի Զմիւրին, Եւ անտի գարձեալ եկն Կոստին ի Գալատիա ի Կաստամնի և անտի ի մեծն Պոնտոս Տրապէզու և այլեաց զքաղաքս զայս և գնաց կրկին ի Երգնկան, զոր Տէր Աստուած մեր ոչ կամեցաւ զկորուստ մարդկան, այլ ետուր զօրութիւն ալեսոր Մուրատ Փաշային, որ եկեալ բազում զօրոք էառ զմեծ զոռողն զճանփալատի որդին և անինայ կոտորեաց և զինքն փախստական արար և ամենայն տունն բնացինչ արար, և այլ բազում կոտորս արար ի յերկրս Տիրերիայ և անտի եկեալ գիմեաց ի վերայ չարին, որ Թաւուլ ասէին, և եկեալ եհաս ի մեծ դաշտն Տարօնոյ և կոտորեաց զնոսսա անինայարար, փախոյց զսակաւս մինչեւ ի Պղպաշն, և հնքն քաջ ծերին՝ որ Աստուած զօրացցց, նստաւ ի մեծ դաշտն Քարերդու, և զօրս արձակեաց այսոր և անջր և զբազումն զտեալ ի պատմամբ պարոնացն և փաշաներուն բերեալ սուր եղ ի վերայ Եսպան, և զոր դտանէին բերէին և սպանանէին և արար մեծ խաղաղութիւն ի վերայ երկրի, Եւ դարձաւ խաղաղութեամբ Խստամզոլ առ թագաւորն իւր, որ զօրացնողն Քրիստոս երկար ժամանակ տացէ սուլթան Աչմատին և իւր մեծ վազիրին՝ Մուրատ փաշային, ամէն » :

Յիշատակարանի մէջ նկարագրուած պատմական իրողութիւնք վերաբերում են Օսմանցւոց Սուլթան Մահմէտ Գ. և Ա. Հմէտ Ա. իշխանութեանց օրերին: Սուլթան Մեհմէդ Գ. (1595—1605) մի թոյլ և անընդունակ իշխան էր, փոփոխամիտ և ենթարկուած օտարների ազգեցութեան: Սորա ժամանակ բացի արտաքին պատերազմներից արեւմուտքում և արեւելքում, օսմաննեան պետութեան ասիական նահանգները լցուել էին ջալալիներով, աւազակներով և ապստամբներով: Ակսած Մարմառ ծովի ափից մինչեւ Բազզատ ու Մօսուլ, Ասորիք ու Գանձակ, ամենուրեք երեւացել էին բազմաթիւ աւազակապետք, որոց իւրաքանչիւրը հրամանատար դաւնալով 10—60,000 արիւնուուշտ անձանց՝ անինայարար յափշտակում, աւարում, գերում էին և աւերում Ցաճկաստանի ասիական նահանգները: Զմնաց ոչ մի

նահանգ իննայտած։ Յայտնի բան է այն գերութեանց և յափըշտակութեանց աւելի ենթարկուեցան Հայերն, որոնց նշանաւոր մասը ստիպուեցաւ իւր հայրենիքից և Տաճկաստանի նեղքին գուառներից գաղթել կամ օտար երկիրներ և կամ ծովեզրեայ գուառները։ Ապստամբ Զալալիներից նշանաւորներն էին՝ Գարաեազրձի Ուրհայի կողմերը, Զանիփոլատի որդի Ալիփաշայ Ասորիքում, Թաւուլ, Քեօրօղիի, Մուստաֆա թէգ, Թանզրիթանիմաղ, Միւսսէլլի չաւուշ, Գալէնաէր Խուսուփի փաշայ, Զըփլախ և այլք բազումք։ Տաճկաստանը այսքան ներքին խռովութեանց և ապստամբութեանց ժամանակ ունէր և արտաքին պատերազմներ Գերմանացոց և Պարսից դէմ։ Այս հանգամանքներում մեռաւ Մեհեմէգ Գ. Սուլթանն և յաջորդեց Ահմատ Ա. (1605 - 1618)։ Առ լսելով իւր ասիական ժողովրդոց հառաշնկներն ուղարկեց մեծ վեզիր Մուրատ փաշային Զալալիների և ապստամբների դէմ 1607 թուականին։ Մուրատ փաշան մի խիստ և անընկճելիք քաջ մարդ էր. չնայելով իւր 90 ամեայ հասակին, շարաթներով և ամիսներով ձիու վերայ նստած ճանապարհորդում էր։ Եւ ահա այս Մուրատ փաշան է, որ յիշուում է յիշատակարանի մէջ և որ ոչնչացրել է թէ Զանիփոլատ օղի Ալի փաշային և թէ Թաւուլին և թէ այլոց ինչպէս յայտնի է պատմութիւնից։

Այս Մուրատը երկիրը ի ներքուստ խաղաղացնելից յետոյ պէտք է երթար պատերազմ Պարսից նահ-Արասի դէմ, բայց նոյն տարին վախճանեցաւ։

---

Զեռագիր № 1268 Մեկնութիւն է մարգարէութեան Եղեկիէլի յեսայի վարդապետէ։ Արտագրողներն են Ստեփաննոս քահանայ և Յակոբ սարկաւագ. Ուրհայ քաղաքում, ընդ հովանեաւ բարձրահայեաց սուրբ Աստուածածնի ՈՒԿԱ թուականին Հայոց և 1612 թ. Փրկչի։

Յիշատակարանը վերջանում է հետեւեալ խօսքերով.

« Անմեղագիր լերուք սխալանացն գրին, որ Գ ամ ի գրելն կացի. ամեն ամ վեզիր մի ի յԱմիթ Ղշլա կուլինին Խ. Ֆ. Ո հեծելօք զմեզ ի տան ի տեղաց կուհանեն, իւրեանք կունստին. զմեր նեղութիւնն որպիսի (որպէս) պատմեմ, որ պատմել չի գար».

Յիշատակարանի վերջին խօսքերն ակնարկում են այն հան-

գամանքին, որ 17 երրորդ դարի սկզբում Պարսից Շահարաս թագաւորի ժամանակ Օսմանցիք շարունակ պատերազմներ ունեին Պարսից դէմ, մանաւանդ Բաղդառն առնելու համար և այդ միջոցին օսմանցոց զօրքերը յաճախ ձմերում էին Ամիթ, ուր բնակչաց բնակարանները բռնում էին և յաճախ ի հաշիւ նոցա ապրում։ Հասկանալի է թէ այդ մեծ ծանրութիւն պիտի լինէր բնակչաց, որ արտայայտում է յիշառակարանի « ուշ նե- չու-նիւ-ն » ուղիւն (« ուղիւն ») ողուածում, որ պատել չէ գործ խօսքերով։

Մեկնութիւն Մատթեոսի ի Ներսիսէ Ծնորհալւոյ, քառածալ բոլորագիր, գրեալ ի թութիւն բամբակի ի Բարսեղ վարդապետէ 1604 թ. յերկիրն Մոկոց յանապատին Ծպատ, լնդ հովանեաւ Ամենափրկիլ։

### ՅԻՇԱՑԱԿԱՐԱՆ.

Փառք եռակի անձնաւորութեան և միոյ բնութեան Հօր անսկզբնականի և անժամանակի, այլ և ծնողի Որդւոյ, և բղխաղի Հոգւոյն սրբոյ, և Որ- դւոյն Միածնի ի ծնեցելոյն ի Հօրէ անժամանակապէս, և Հոգւոյն Ճշմար- տի փառակցի Հօր և Որդւոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Արդ՝ գրեցաւ մեջնութիւնս Մատթեոսեան աւետարանին՝ ի մեծ թուա- կանութեան Հայոց հազար և միուն երրորդի և երրորդի ի յերկիրս Մո- կաց, ի մեծափառ և ի հրեշտակարնուկ անապատս, որ Ծպատ վերաձայնի, ի գուռն սրբոյ Ամենափրկչիս և սրբոյ Կարտապետիս, ի դառն և ի վշտալից ժամանակիս՝ ի սասանման և վրովովման ներկայիս, որ շուրջանակի սաստիա- գին երկիւղիւ պաշարեալ կամք՝ ի Պարսից, ի Մարտոց, և Յօսմանականացն, Որ ի սոյն ամի շարժեցաւ արշայն Պարսից՝ Շահ Աբասն յԱսպահանայ և եկն ի վերայ Դաւրէժ շահաւոտն քաղաքի՝ որ Ասէք քարն կոչի, կոտորեաց զբազում զօրս քաղաքին և էտա զնաւ Եւ յետ ոյնորիկ եկն ի Զուզոյ և ի Նախիջեան, տիրեաց նոցա և եհաս ի մեծն Հայք՝ ի դաշտն Արարատեան ի քաղաքն . . . Երևան, պաշարեաց զնաւ ամիսս ինն, և բազում և ահա- զին պատերազմն պատերազմացան Աբուբագիրըն և Օսմանիքն ընդ զօրաց արեւելից, և յետ այնորիկ պարտեալ Օսմանիքն մասնեցան ի ձեռս Պարսից, վասն զի ոչ լինելոյ նոցա օժանդակութիւն ի մեծ արքայէն Կոստանդնու- պօլիս՝ որ Հոնքարն կոչի, Եւ այսպէս կայ աշխարհոյ Հայոց ի մէջ երկուց՝ և մանաւանդ երից սուսերաց մերկացելոց՝ վերոյ ասացեալ ազգացն Մաշմա- տականաց։ Եւետ այսքան անցիցս ալէտափց զինի սակաւ աւուրց ել ի Կոս- տանդնուպօլիսէ, հրամանաւ Հոնքարին, որ Սուլթան Ահմատ վերաձայնեն, մեծ զօրագարն՝ որ Թղալ ողի կոչի, անհուն և անհամար զօրոք և եկն ե-

հաս ի Կարնոյ՝ որ է Երզրում՝ քաղաք։ Եւ Պարսկց լրտեսեալ զորբանութիւն զօրացն տաճկաց՝ իմագեալ թէ ոչ կարէին զգէմ ունել, վասն որյ գլխակորեալ ամօթով նկուն գարձան առանց պատերազմէլոյ և դիմի հարկանելցոյ։ Բայց զանձիրս զօրութեան, և զառ զաւար գերութեան՝ զօր Պարսկակը ընդ Հայք արարին, առաւել է՝ քան զբարելացւոցն առ Խորաշէլացիսն զոր ոչ կարէ մի ըստ միովէ պատմել և կամ ընդ գրով արկանել, զի սկսեալ ի տանէն Ծիրակայ մինչեւ ի Ֆուղայ և տունն Կողմնեաց զայք բնաջինջ արարեալ տարեալ հանին ի խորին Պարսիկս, ի Ըօշ և յԱսպահան, կաթուղիկոսօք և եպիսկոպոսօք, քահանայիւք և ժողովրդովք, արամբր և կանամբր, ընչիւք և գոյիւք, Եւ թողին զգաշտն Արարատեան, և զնափիքեան նահանդօքն, և զփարթամն ճոխութեամբ զֆուղայ շրջակայիւքն ամսիյ և թափուր ի բնակչացն. և ինքն չարպուշն Արաս նստեալ ձմերցաւ ի Դավրէժ, և Ֆալալողլին՝ սարդարն և զօրավարն օսմանցի ազգին. գարձաւ ի Ասն ի յամուրն Ծամիրակերտին ձմերել. գես ևս զապագայն ոչ զիտեմք, Աստուծոյ միայն է զիտելի՝ որ Տէրն է ժամանակաց, Արդ ի սղն և ի յայս ժամանակի եղեւ սկիզբն զրչութեան սորա, և ի սղն ամի կատարեցաւ ձեռնտուութեամբ հոգեւոր որդւոց մերոց Յովսէփ և Յովհաննէս գրոց աշակերտացն, որ մինչեւո առ մեզ էին ի վարժ ուսման գեգերեալ, որ մեծաջան երկամբք ընթեռնուուին զնիերածութիւն Պորփիրի և զիորին ասացուածս աստուածարանից վարժապետաց. և եղեն նպաստը թուղթ կոկելով և տեսր խազելով, Այլ և զչարավառն իմ և եղրօրորդին ըստ մարմնայ՝ Յովհաննէս գպիրն և ուշիմ ընթերցողն, որ զյոլովս ի թզմցն նա կոկեաց, և աւարտեցաւ սա ձեռամբ իմով մեղամածի Բարսղի նուաստ վարդապետի՝ կարողութեամբ ամսնազօրին Խոսուծոյ, յաւուրս վաթսուն և վեցերորդի. զոր և աղաչելմ արտասուագու ձայնիւ զընթերդող և զբացայստող սուրբ բարունիքդ՝ յիշել ի մաքրափայլ և ի մշտամատցց յաղօթս ձեր, զիս՝ զեղեկին անձնու՝ զթարսեղ տրուալ բանի սպասաւորս, նաև զուսուցանող վարժապետն իմ՝ զՅովհաննէս բարունապետն, որ մականուն Քըրգութենց կոչի. այլ և զծոսզան իմ ըստ մարմնոյ զնիւրսէս քահանայն, և Մհէր շահն, և զեղբարսն իմ՝ զՄարտան և զայրապետ երեցն և զՄովսէսն՝ զիոնիսցեալոն ի Քրիստոս. և զիենդանի եղբայրն իմ՝ զԱրապիսն և զայլ արեան մերձաւորսն իմ. զի և գուր յիշեալ լինիջիք, և մասն ողորմութեան գտանիցք ի Քրիստոս Աստուծոյ մերմէ ամէն։

Այս յիշատակարանը համառօտնկարագիր է այն անցից, որ կատարեց Պարսից Նահ-Արաս մեծ թագուարը 1604 և 1605 թռւականներին Հայաստանի մէջ, նուաճելով Դաւրէժ, Երևան քաղաքներին և բոլոր Արարատեան աշխարհն Հայոց խլելով Սամանցիներից։ Եւ վախենալով Սամանցիներից որոնիք Ահմէտ Սուլթանի հրամանով Զղալ - օղլի - Սենան փաշայի առաջնորդութեամբ մեծ բազմութեամբ եկան պատերազմ՝ Նահ-Արասի

դէմ, որպէս զի կրկին տիրեն վերջինի խլած երկիրներին, բոլոր  
Արարատեան հայանգի Հայերին մեծ մասամբ բանի գաղթեցրեց  
Պարսկաստան, թէ օսմանցւոց յաֆոլութեան առաջն առնել  
ցանկալով, որպէս զի նորա ամայացեալ Արարատեան աշխար-  
հում ոչինչ չգտնեն և թէ նոյն իսկ Պարսկաստան ծաղկեցնելու  
համար Հայերի ձեռքով, որոնք լաւ երկրագործ արհեստաւոր և  
վաճառական ժողովուրդ էին: Մանրամասնաբար նկարագրած  
է այս անցքը Առաքել պատմագիրն, որ ցանկացողք կարող են  
կարգալ և տեղեկանալ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

### ԼԵ.

Հոսուած գիւղը և նորա եկեղեցին. Երդարձին և Հորբարձին գիւղերը. Ալ-  
Ջինէ առեւտի եկեղեցին. Վաշայան. Նորա պատմութեանը. Առ-  
պատմութեանը եկեղեցի. Տէր 0.ա.գի Ալբանիա-Ռիենը. Ալաքետաղի հայա-  
նաց արքունը. Նորա միջի վիճակները, ունակութ աւետարանը. Ֆաւան-  
դութեան:

Հասանի գիւղից Հոսուածն գիւղը գնալիս մենք անցնում ենք  
Ալագեազ գետի հոսանքին հակառակ, նորա երկու ափը զար-  
դարող գեղեցիկ ծառաստանների միջնից: Նատ յանցած՝ մենք  
հասնում ենք այն տեղ, ուր Գիւղեալ բուժակը խառնը-  
ւում է Ալագեազի գետի հետ: Խառնուրդը անցած, վարելահո-  
ղերի սահմանում մեզ հանդիպում է փոքրիկ սրբատաշ քարից  
շինած եկեղեցի, որի ծածքը շատ հնուց խոնարհուած է և որի  
մէջ՝ իրրե պահապան կանգնած է մի բարձր ընկուղենի:

Հոսուած գիւղը, որ գրած է գետերի խառնուրդից քիչ վեր,  
Ալագեազ գետի աջակողման ափի վերայ, շրջապատած է մե-  
ծածեծ քարակոյաներալ: Փողոցները նեղ, ոլոր սոլոր, նայնպէս  
քարակոյաների մէջ: Գիւղը բոլորովին թրքարնակ է, աղտոս և  
անճոռնի տներով: Իրրե հայկական մնացորդ՝ գիւղի մէջ այսօր  
ևս կանգնած է մի սագաշէն մեծաղիք աւերակ եկեղեցի: Նո-  
րա կամարաշէն տանիքը ամրացած է չորս քառանկիւնի սիւնե-  
րի վերայ, իսկ պատերի մէջ աջ և ձախ հազցրած են այլ տեղից